ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հուլիս ամսվա վերջի դրությամբ)









2023թ հուլիսի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 384,2 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.7 %-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 7.8 %-ով, իսկ 2021 թվականի հուլիսի 31-ի նկատմամբ՝ նվազելով՝ 0.5 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 172.8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 5.1 %-ով, նվազելով 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 8.6%-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 0.9 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 211.3 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.6 %-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 5.2%-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 6.6%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 351.5 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.7 %-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 13.8 %-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 26.5 %-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 804.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.1%-ով, 2022 թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 14.6 %-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 27 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 547.2 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.7%-ով, 2022թ հուլիսի 31-ի նկատմամբ աճելով 0.04%-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 17.6 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 362.2 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.8%-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 1 %-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 21.8%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 810,7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9,7%-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 24.,3%-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 62.2 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 211.3 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.6 %-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ 5.2 %-ով, իսկ 2021թ.հուլիսի 31-ի նկատմամբ՝ 6.6%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6մլրդ 116.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.8 %-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 4.5 %-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով՝ 1.5%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 688.2 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.8 %-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 31.2%-ով, իսկ 2021թ հուլիսի 31-ի նկատմամբ՝ 104.2%-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 547.2 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.7%-ով, 2022թ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով 0.04 %-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 17.6 %-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 558.9 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.2 %-ով, 2022թ.-ի հուլիսի 31-ի նկատմամբ՝ 6.8 %-ով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ ՝ 0.5 %-ով:

2023թ. հուլիսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում ՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.91 %, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.29 տոկոսային կետով, 2022թ. հուլիսի 31-ի ցուցանիշից ավել է 0.07 տոկոսային կետով, 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշից՝ 1.28 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.80%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.28 տոկոսային կետով, 2022թ. հուլիսի 31-ի համեմատությամբ 0.03 տոկոսային կետով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ՝ 1.16 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.29%, ինչը 0,01 տոկոսային կետով պակաս է 2022 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2022թ. հուլիսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.04 տոկոսային կետով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.12 տոկոսային կետով:

2023թ. հունվար-հուլիսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված ՝

1) տոկոսավճարները կազմել են 125.70 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 21.3 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 28.3 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 74.16 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 13.38 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 19.8 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 51.54 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7.91 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8.5 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2023թ. հունվար-հուլիսին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 211.91 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 75.59 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 244.72մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 204.99 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 60.99 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 88.11 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 6.93 մլրդ դրամ, ինչը ավել է է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 14.61 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 332.82 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-հուլիսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 77.01 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 98 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 84.1%-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 137.62 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.6 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է է 5.2 %-ով,

3) ստացվել են 157.67 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 45.32%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 180 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 214.63 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 27.7 %-ով, իսկ 2021 թ, ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 24.3 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2023թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 726.5 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. հուլիսի 31-ի և 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 230.2, 344.1.9 և 651.3 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3090 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 114 օրով, 2022թ. հուլիսի 31-ի համեմատությամբ պակաս է 509 օրով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ պակաս է 973 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 6.80 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.51 տոկոսային կետով, 2022թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է 1.1 տոկոսային կետով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է 2.34 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.99 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. հուլիսի 31-ի և 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.37 , 1.46 և 1.86 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 14.37 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 1.32 տոկոսային կետով, 2022թ. հուլիսի 31-ի համեմատությամբ՝ 2.83 տոկոսային կետով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ՝ մեծ է 7.41 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 82.64 %, ինչը 2022թ . դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 1.69 տոկոսային կետով, 2022թ. հուլիսի 31-ի համեմատությամբ՝ 4.29 տոկոսային կետով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ՝ 9.32 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. հուլիս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 7.5 տարի: Այս ցուցանիշը 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.6 տարով, իսկ 2021թ. հուլիսի 31 -ի ցուցանիշից՝ 1.3 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 14.9 %, որը 2022թ. հուլիսի 31-ի և 2021թ. հուլիսի 31-ի մակարդակներից մեծ է համապատասխանաբար՝ 5,1 և 3,4 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ.հուլիսի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.5%, լողացող տոկոսադրույքով՝ 16.5 %: Ընդ որում, 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. հուլիսի 31-ի ցուցանիշից պակաս է 0.3 տոկոսային կետով, իսկ 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշից ավել է 0.8 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 56,6%, ներքին պարտք՝ 43.4 %: Ընդ որում, 2023թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ. հուլիսի 31-ի և 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 5.5 և 16.5 տոկոսային կետերով: